ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2015, 68, № 1, 95-97

ՌԱՖԱՅԵԼ ԼԵՎՈՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ
(ծննդյան 80-ամյակին)

Լրացավ վաստակաշատ գիտնական, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի օգտակար հանածոների և պետրոլոգիայի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր Ռաֆայել Լևոնի Մելքոնյանի 80-ամյակը:

Ռ.Մելքոնյանը ծնվել է 1934թ. նոյեմբերի 29-ին, Երևանում: 1958թ., գերազանցությամբ ավարտելով Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը, նա աշխատանքի է անցնում ԽՍՀՄ Երկրաբանության նախարարության Գրոմովյան արշավախոմբում, որը զբաղվում էր Անդրկովկասի տարածքում ռադիոակտիվ հումքի որոնումներով: 1960թ-ից մինչ այժմ՝ արդեն 55 տարի, նա աշխատում է Երկրաբանական գիտությունների ինստիտուտի պետրոգրաֆիայի բաժնում:

Ռ.Մելքոնյանն իր գիտական գործունեությունը սկսել է Ալավերդու հանքային շրջանի ինտրուզիվ համալիրների ուսումնասիրությամբ: Ի տարբերություն իշխող կարծիքների, նա առաջ քաշեց նոր պատկերացումներ այդ համալիրների հասակի, սկզբնային հալոցքի ոչ թե գրանիտային, այլ բազալտային կազմի վերաբերյալ, հիմնավորեց պղինձ-հրաքարային հանքայնացման կապը բազալտային հալոցքի խորքային օջախների հետ:

1989թ. Ռ.Մելքոնյանը Մոսկվայում, ԽՍՀՄ ԳԱ Մետաղական հանքավայրերի երկրաբանության, պետրոգրաֆիայի, մինեբալոգիայի, երկրաքիմիայի ինստիուտում (ИГЕМ АН СССР), պաշտպանեց իր դոկտորական ատենախոսությունը, որում իրենց հիմնավորված լուծումները ստացան Փոքր Կովկասի կղզաղեղային համալիրների երկրաբանության, պետրոլոգիայի և հանքագոյացման մի շարք առաջնահերթ խնդիրներ: Նրա կողմից առաջին անգամ Կովկասի տարածքում առանձնացվեց և ուսումնասիրվեց Cu-Mo հանքավայրերի նոր՝ կղզաղեղային տիպը (Թեղուտ, Կաշեն, Ոսկեսար և այլն): Ի տարբերություն իշխող պատկերացումների, Վիրահայոց-Ղարաբաղի կղզաղեղային կառույցը համարվեց հեռանկարային Cu-Mo հանքավայրերի հայտնաբերման տեսանկյունից, ինչն ապացուցվեց Արցախի տարածքում այժմ շահագործվող Կաշենի հանքավայրի հայտնաբերմամբ:

Ռ.Մելքոնյանի և ավագ գիտ.աշխատող Մ.Հակոբյանի կողմից թթվածնաիզոտոպային հետազոտությունների ոլորտում ստեղծվեց

նոր ուղղություն, որի շնորհիվ հնարավոր դարձավ լուծել մի շարք կարևոր խնդիրներ ապարա- և հանքագոյացման բնագավառներում: Մշակվեց թթվածնաիզոտոպային մեթոդ ասիմիլյացիայի և դիֆերենցիացիայի պրոցեսների տարբերակման համար, Cu-Mo պորֆիրային հանքավայրերի առաջացման տեսության մեջ ապացուցվեց կղզաղեղային հանքավայրերի հիդրոթերմալ լուծույթների կազմում ծովային ջրի մասնակցության հարցը: Առաջին անգամ մշակվեց կղզաղեղային Cu-Mo հանքավայրերի առաջացման մոդելը, ցույց տրվեց նրա սկզբունքային տարբերությունը հետկոլիզիոն էտապի Cu-Mo հանքավայրերի (Քաջարան, Ագարակ և այլն) առաջացման մոդելից:

Ռ.Մելքոնյանի կողմից առանձնացվեց Հայ-Իրանական վերին էոցեն-միջին միոցենի հասակի Cu-Mo հանքայնացման դիսկրետ գոտի մոտ 2000 կմ ձգվածությամբ, որի ակտիվությունը շարունակվել է մոտ 32 մլն տարի: Այդ գոտու սահմաններում տեղադրված են այնպիսի գիգանտ հանքավայրեր, ինչպիսիք են Քաջարանը Հայաստանում և Սար Չեշմենը Իրանում, և գոտին որակավորվեց որպես Cu-Mo հանքայնացման նոր պրովինցիա:

Վերջին 10 տարիների ընթացքում Ռ.Մելքոնյանը եղել է մի շարք միջազգային նախագծերի (CRDF, INTAS, SCOPES և այլն) Հայաստանի մագմայականության և մետաղագոյացման աշխատանքային խմբերի գիտական ղեկավար և պատասխանատու կատարող: Ֆրանսիայի, Շվեյցարիայի, ԱՄՆ-ի, Թայվանի, Իտալիայի գործընկերների հետ կատարված հետազոտությունների արդյունքում ստացվեցին նոր, կարևոր արդյունքներ Հայաստանի հանքամագմայական համալիրների առաջացման, հասակի ու հանքաբերության վերաբերյալ:

Ռ.Մելքոնյանը հեղինակ է շուրջ 130 գիտական աշխատությունների, այդ թվում՝ 4 մենագրությունների (3-ը համահեղինակությամբ): Նա եղել է Հայաստանի ազգային ատլասի Ա հատորի (2007թ.) խմբագրական խորհրդի անդամ, երկրաբանական և օգտակար հանածոների քարտեզների համահեղինակ:

Ռ.Մելքոնյանը ճանաչված գիտնական է: Նրա աշխատանքների արդյունքները բազմիցս ներկայացվել են միջազգային և համամիութենական կոնգրեսներում և գիտաժողովներում՝ Ռուսաստանում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Բուլղարիայում, Սլովակիայում: Նա եղել է ԽՍՀՄ միջգերատեսչական Պետրոգրաֆիական կոմիտեի անդամ, ինչպես նաև Ղրիմ, Կարպատներ, Կովկաս Պետրոգրաֆիական կոմիտեի նախագահի տեղակալ: Նշանակալի է Ռ.Մելքոնյանի ավանդը գիտակազմակերպչական բնագավառում՝ 26 տարի նա վարել է ԵԳԻ տնօրենի գիտության գծով տեղակալի պաշտոնը:

Բազմավաստակ և բեղմնավոր գիտական և գիտակազմակերպչական գործունեության համար նրան 1985թ. շնորհվել է "ՀՍԽՀ վաստակավոր երկրաբան" պատվավոր կոչումը, 1998թ. ընտրվել է Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ, 2000թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010թ.

պարգևատրվել է Եվրոպայի բնական գիտությունների ակադեմիայի Լեոնարդ Էյլերի մեդալով, իսկ 2013թ.՝ ՀՀ կառավարության Անանիա Շիրակացի մեդալով:

Ռ.Մելքոնյանն իր գործընկերների նկատմամբ բարյացակամ է, միևնույն ժամանակ պահանջկոտ ու սկզբունքային, նա գիտությանը նվիրված, բազմակողմանի զարգացած, համեստ, բարեկիրթ անձնավորություն է:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը, Քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունքը, ԵԳԻ անձնակազմը ջերմորեն շնորհավորում են վաստակաշատ գիտնականի ծննդյան 80-ամյակը և մաղթում նրան քաջառողջություն, ամենայն բարիք ու ստեղծագործական նոր հաջողություններ:

ՀՀ ԳԱԱ Նախագահություն
Քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ "Գիտություններ Երկրի մասին" տեղեկագրի խմբագրություն